մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, ուստի հայցը մերժման ենթակա լինելու պայմաններում, Դատարանը գտնում է, որ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար բռնագանձելու հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. Ավետիք Դավթյան Հուսիկի ԱՁ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/157» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ Ավետիք Դավթյան Հուսիկի ԱՁ-ի հայտը մերժելու որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք պայմանագիր կնքելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և Ավետիք Դավթյան Հուսիկի ԱՁ-ին ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am